02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

17 (1416) • 10 մայիսի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Հաղթանակների մայիս

Յոթանասունչորս տարի առաջ հարյուր հազարավոր հայորդիներ խորհրդային բանակի կազմում իրենց հերոսական պայքարով, անձնազոհությամբ աշխարհին ու նաեւ մեր ժողովրդին ազատագրեցին ֆաշիստական լծից:

Զուգադիպությո՞ւն էր, որ մեր մյուս պատմական հաղթանակը նույնպես Մայիսի 9-ին էր լինելու: Օրինաչափությո՞ւն էր: Մայիսն ընդհանրապես հայոց պատմության մեջ վճռորոշ հաղթանակների ամիս է, իսկ Մայիսի 9-ը՝ մեր պապերի, հայրերի, մեր սերնդակիցների հաղթանակների միասնական տոնը, եւ այն մեզ համար թանկ է:

Երկրի համար ճակատագրական տարիներին միլիցիան մշտապես պայքարի առաջին գծում է եղել՝ սահմանների պաշտպանություն, ազատագրական մարտերին մասնակցություն, երկրի ներքին կայունության, հասարակական կարգ ու կանոնի հաստատում:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին բազմազան ու բազմաբնույթ էին միլիցիայի գործառույթները: Պատերազմի առաջին իսկ օրերին Հայաստանից ռազմաճակատ մեկնեց միլիցիայի երեք հարյուր աշխատակից, իսկ թիկունքում մնացածները, մասնագիտական գործառույթներին զուգահեռ, լծվեցին պաշտպանական ծավալուն աշխատանքների. միլիցիայի աշխատակիցներից կազմվում են ինքնապաշտպանական եւ մարտական խմբեր:

Թիկունքում միլիցիան մեծ աշխատանք էր տանում զորակոչի կազմակերպման, ինչպես եւ դասալքության դեմ պայքարի ուղղությամբ: Ռազմաճակատում ծանր մարտեր էին, իսկ այդ ընթացքում դասալիքների մի ստվար զանգված ընդգրկվելով ավազակախմբերում՝ հանցագործություններ էր անում շրջկենտրոններում, գյուղերում:

էջ 2

Ընդունելություն ոստիկանությունում

Մայիսի 6-ին ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը հանդիպում ունեցավ ԱՄՆ փոխպետքարտուղարի թմրամիջոցների դեմ պայքարի եւ իրավապահ համագործակցության հարցերով տեղակալ Ջորգեն Էնդրյուսի, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության Թմրամիջոցների դեմ պայքարի եւ իրավապահ համագործակցության ծրագրի տնօրեն Մայքլ Նուլմանի, ծրագրի իրավական գործերով ավագ խորհրդատու Ադի Հոլովեյի եւ համակարգող Մարիցա Հովհաննիսյանի հետ:

Վալերիյ Օսիպյանը ներկայացրեց ոստիկանությունում ընթացող բարեփոխումները, որոնք ընդգրկում են տարբեր ոլորտներ՝ սկսած օրենսդրական փոփոխություններից մինչեւ ծառայողների սոցիալական ապահովության բարելավում եւ առաջիկայում նախատեսվող պարեկային ծառայության կազմավորում:

Կողմերն ընդգծեցին, որ ժամանակակից մարտահրավերներին հակազդելու համատեքստում արդյունավետ է փորձի փոխանակումը իրավապահ մարմինների հետ՝ համակարգային բարեփոխումների, կրթական, հասարակական կարգի ապահովման եւ մի շարք այլ բնագավառներում:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր եւս:

Ջորգեն Էնդրյուսը շնորհակալություն հայտնեց բովանդակալից զրույցի համար, որի ընթացքում քննարկվեց նաեւ, թե Թմրամիջոցների դեմ պայքարի եւ իրավապահ համագործակցության բյուրոն իր փորձառությամբ ինչպես կարող է աջակցել Հայաստանի ոստիկանությանն իր հավակնոտ բարեփոխումներում:

Հանդիպումն անցավ կառուցողական փոխըմբռնման մթնոլորտում:

Ոստիկանության լավագույն բաժինը

1600-ից ավելի հանցագործության դեպք, 800-ից ավելի բացահայտում. 2018-ին ոստիկանության լավագույն ստորաբաժանում ճանաչված Էրեբունու բաժնի ցուցանիշներն են: Ոստիկանության Էրեբունու բաժինը բազմիցս հայտնվել է հանրության ուշադրության կենտրոնում՝ վարչական շրջանում կատարված մի շարք առանձնապես ծանր, աղմկահարույց հանցագործություններ բացահայտելով: Բաժնի բոլոր ծառայողները ներգրավված են եղել նաեւ նախորդ տարի տեղի ունեցած զանգվածային միջոցառումների ժամանակ հասարակական կարգի պահպանման աշխատանքներին: Չնայած աննախադեպ ծանրաբեռնվածությանը՝ ամուր կանգնել են հանցավորության դեմ պայքարի առաջնագծում՝ արժանանալով տարվա լավագույնի կոչմանը:

էջ 3

Հանդիպում լրագրողների հետ

Մայիսի 6-ին ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության ասուլիսների սրահում տեղի ունեցավ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 3-րդ վարչության պետ, ոստիկանության գնդապետ Նելլի Դուրյանի հանդիպումը լրագրողների հետ:

Նելլի Դուրյանը ներկայացրեց 2019 թ. առաջին եռամսյակում անչափահասների կողմից կատարված հանցագործությունների վիճակագրությունը: Անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ հանցագործությունները պակասել են 4-ով. նախորդ տարվա 66 հանցագործության փոխարեն այս տարի արձանագրվել է 62-ը: 3-ով պակասել են անչափահասի կողմից մարմնական վնասվածք հասցնելու, ավելացել են գողության եւ խուլիգանության դեպքերը:

Նախորդ տարվա համեմատությամբ, այս տարի նվազել են նաեւ անչափահասների նկատմամբ բռնության դեպքերը:

Ոստիկանության գնդապետը ներկայացրեց նաեւ անչափահասների շրջանում պահվող սառը զենքեր հայտնաբերելու տվյալները: Ոստիկանության պետի հանձնարարությամբ՝ այս խնդիրը ոլորտը սպասարկող ոստիկանների ուշադրության կենտրոնում է: Այս տարվա առաջին եռամսյակում, ոստիկանների ամենօրյա շրջայցերի եւ ստուգայցերի արդյունքում, անչափահասների մոտ հայտնաբերվել է 41 արգելված առարկա, որից 18-ը՝ կռփազենք:

Նելլի Դուրյանը ներկայացրեց նաեւ մուրացիկ երեխաների հետ տարվող եւ ընտանիքում բռնության կանխարգելման ոլորտում կատարված աշխատանքները:

Հանդիպման ավարտին Նելլի Դուրյանը պատասխանեց լրագրողների հարցերին:

Բացահայտվել է կիբերհանցագործություն

Խաբեությամբ ստանում են քաղաքացու սոցապահովագրության համարը եւ բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունները: էջ 3

Կրքերի դավադրություն

Նախկին գործատուի հետ հանդիպման գնացել էր նրան վնասելու մտադրությամբ՝ ատրճանակով զինված, եւ այն գործի դրեց... էջ 6

Վստահության գինը

«Պաշտպանական» մեխանիզմը չաշխատեց, փոխարենը ավելացրեց քրեական պատասխանատվության բեռը: էջ 7

Հաղթանակների մայիս

Սկիզբը՝ էջ 1

1942 թ. գարնանը 18-հոգանոց ավազակախումբ վնասազերծեցին Ազիզբեկովի շրջանի (Վայք) ՆԳ բաժնի աշխատակիցները: Իսկ 1942-ի սեպտեմբերին Սիսիանի շրջանի ՆԳ բաժնի աշխատակիցները ձերբակալեցին պարաշյուտիստ դիվերսանտների: Նրանց մոտ հայտնաբերվեց մեծ քանակությամբ զենք ու պայթուցիկ նյութ: Դիվերսանտներին հանձնարարված էր ահաբեկչական գործողություններ կատարել արդյունաբերական ձեռնարկություններում:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ 1943 թ. ընթացքում վնասազերծվեց 44 ավազակախումբ՝ 235 մասնակիցներով: Առգրավվեց մեծ քանակությամբ զենք ու զինամթերք:

Պատերազմի տարիներին միլիցիան մեծ աշխատանք տարավ թափառաշրջիկ, անապաստան ու խնամազուրկ երեխաների հայտնաբերման ուղղությամբ: 1944 թ. առաջին երեք ամիսներին միայն Երեւանի փողոցներից հայտնաբերվել է 1087 անապաստան ու խնամազուրկ երեխա: Նրանց մի մասին ուղարկում են մանկատներ, մի մասին՝ բուժման: Ուժեղացվում է մանկական սենյակների աշխատանքը, ստեղծվում են մանկական ուղղիչ-աշխատանքային գաղութներ, բացվում են մանկատներ, եւ այդ ամբողջ գործընթացը միլիցիայի նախաձեռնությամբ, օժանդակությամբ ու հսկողությամբ:

Պատերազմի ավարտից հետո ռազմաճակատի թոհուբոհով անցած շատ հայորդիներ ծառայության անցան ներքին գործերի համակարգում՝ շարունակելով պայքարը արդեն հանցավորության դեմ, հանուն հասարակական կարգ ու կանոնի:

1980-ականների վերջը հայ ժողովրդի համար նշանավորվեց Արցախյան ազգային-ազատագրական շարժման բուռն վերելքով:

Ծառայողական պարտականություններին զուգահեռ՝ միլիցիայի աշխատակիցները դառնում էին սահմանապահ մարտիկներ: Իսկ երբ Հայաստան մտցվեցին պատժիչ զորամասեր, միլիցիայի աշխատակիցները կանգնեցին ժողովրդի ու պատժիչների միջեւ՝ հարվածն ընդունելով իրենց վրա: Հայաստանի միլիցիան թանկ ու անդառնալի կորուստներ կրեց Ոսկեպարում, երբ իրավապահների ստորաբաժանումն ընկավ հակառակորդի դավադիր ծուղակը, Նոյեմբերյանում, երբ սահմանամերձ գյուղերի բնակչությանը պատժիչ գործողություններից պաշտպանելիս գերեվարվեցին տասնյակ միլիցիոներներ, Այունիքի սահմանապահ գյուղերը պաշտպանելիս, Արցախի բնակչության անվտանգությունն ապահովելու ժամանակ...

1990 թվականի մայիսին կազմավորվեց միլիցիայի օպերատիվ հակազդման (հետագայում՝ միլիցիայի հատուկ նշանակության) ջոկատը: Ջոկատի խնդիրն առանձնահատուկ էր՝ նրան վերապահված էր պայքարել եւ Հայաստանի Հանրապետության ու Ղարաբաղի սահմաններին ոտնձգող թշնամու, եւ երկրի ներսում գործող քրեական տարրերի դեմ: Ջոկատին անդամագրվեցին համակարգի լավագույն աշխատակիցները, որոնց առաջնորդում էր գիտակցումն այն բանի, որ չկա հայրենիքի հարատեւում՝ առանց անսասան սահմանների, չկա ուժեղ պետություն՝ առանց ներքին կայունության:

Միլիցիայի հատուկ նշանակության ջոկատը ռազմական գործողությունների էր մասնակցում ամենածանր ու վտանգավոր հատվածներում, ռազմավարական կարեւորության տեղամասերում: ՆԳ համակարգի տասնյակ աշխատակիցներ զոհվեցին ռազմադաշտում, շատերը վերադարձան սպիներով...

Արցախյան ազատամարտի ողբերգական դրվագներից մեկը, դեռ լայնածավալ պատերազմական գործողություններից առաջ, խորհրդային բանակի եւ ադրբեջանական օմոնի համատեղ միջոցառումն էր՝ «Կոլցո» օպերացիան, որին զոհ գնացին, նաեւ վիրավորվեցին ու գերեվարվեցին Հայաստանի ներքին գործերի նախարարության տասնյակ աշխատակիցներ: Այդ դավադիր օպերացիայում առանձնահատուկ է Ոսկեպարի ողբերգությունը:

1991 թվականի մայիսի 5-ի առավոտ երեկոյան Նոյեմբերյանի ներքին գործերի բաժնում ահազանգ է ստացվում, որ ադրբեջանցիները հատել են Նոյեմբերյանի սահմանն ու շարժվում են դեպի Ոսկեպար: Ոստիկանների խումբը ավտոբուսով ու «Նիվա»-ով մեկնում է գյուղ: Գնում են սարով: Մոտ մեկուկես կիլոմետր կար մինչեւ գյուղ, երբ հայտնվում են խորհրդային բանակի ու ադրբեջանական օմոնի ծուղակում: Տասնմեկ ոստիկան զոհվում է տեղում, մյուսները գերեվարվում են: Նրանցից երեքը զոհվում են ադրբեջանական բանտերում:

1991 թվականին կազմավորվեց ՆԳՆ ներքին զորքերը՝ որպես երկրի ներքին կայունության երաշխավոր, որպես մեր նորագույն պատմության մեջ առաջին կանոնավոր զինվորական կազմավորում: Թիկունքում էլ իրավապահները ամենժամյա պայքարի մեջ էին օրեցօր ակտիվացող ու լկտիացած հանցագործ տարրերի դեմ: Միլիցիայի աշխատակիցները ռազմաճակատում իրենց որդիական պարտքն էին կատարում առ Հայրենիք, թիկունքում՝ իրենց մասնագիտական պարտքը՝ պետության ու ժողովրդի հանդեպ:

Հավատարմությունը մայիսյան հաղթանակներին այլընտրանք չուներ. մեր պապերից հաղթական ոգի էինք ժառանգել ու պիտի հաղթեինք...

Մայիսի 9-ը մեզ համար Շուշիով դարձավ կրկնակի հաղթանակի օր, հաղթանակներ, որ միավորում են սերունդներին: Ու մեր հավատամքն է՝ պահել Մայիսի 9-ի խորհուրդը՝ որպես գերակա արժեք, իսկ հաղթանակները՝ հպարտ հիշողություն...

Դաստիկ ՊՈՂՈՍՅԱՆ

«Տուրիստական» խարդախություններ

Մայիսի լույս 1-ի գիշերը ոստիկանություն դիմած տղամարդը հայտնեց, որ խարդախության զոհ է դարձել: Մարտ ամսին դիմել է տուրիստական ընկերություններից մեկին՝ ընտանիքի հանգիստը Հունաստանում կազմակերպելու նպատակով: Համաձայնության գալուց հետո ընկերության հաշվին փոխանցել է 916 հազար դրամ: Քաղաքացու հայտնածով՝ ընկերության տնօրենը չարաշահել է իր վստահությունը եւ խաբեությամբ տիրացել գումարին:

Ահազանգից մոտ երկու ժամ անց հնչեց եւս մեկը՝ նույն բովանդակությամբ: Այս դեպքում տղամարդը ընկերության հաշվին փոխանցել էր 1 միլիոն 10 հազար դրամ:

Ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողները օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզեցին ընկերության տնօրենի ինքնությունը: Քրեական հետախույզները 24-ամյա Աննա Սահակյանին կասկածանքով բերման ենթարկեցին ոստիկանության Կենտրոնական բաժին:

Նախնական տվյալներով՝ Աննա Սահակյանը հունվարին բացել էր տուրիստական ընկերություն եւ հաճախորդներին առաջարկել ճանապարհորդությունների փաթեթներ՝ նույնատիպ գործունեությամբ զբաղվող այլ ընկերությունների առաջարկներից զգալիորեն ցածր գներով: Փոխանցված գումարներով, սակայն, ո՛չ ավիատոմսեր էր գնել, ո՛չ հյուրանոց ամրագրել:

Նյութերի նախապատրաստման ընթացքում ոստիկանություն է դիմել ընկերության գործունեությունից տուժած ավելի քան քսան քաղաքացի:

Խարդախության հատկանիշներով քրեական գործ է հարուցվել:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Գրպանահատը հայտնաբերվեց

Ապրիլի 26-ին ոստիկանության Արաբկիրի բաժնում գրպանահատության երկու դեպք գրանցվեց: Ժամը 14-ի սահմաններում թիվ 47 երթուղու ավտոբուսում մի տղամարդու գրպանից դրամապանակ էին հափշտակել: Երեկոյան դարձյալ նույն երթուղու մեկ այլ ավտոբուսի ուղեւորուհու պայուսակից էին գողացել դրամապանակ:

Ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները որոնողական աշխատանքներ սկսեցին: Բացահայտման աշխատանքներին միացան նաեւ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի 6-րդ բաժանմունքի ծառայողները, եւ հենց նրանց պրոֆեսիոնալ գործողությունների շնորհիվ ժամեր անց կասկածյալը հայտնաբերվեց:

Քրեական հետախույզները, օպերատիվ տվյալներն իրացնելով, գողությունները կատարելու կասկածանքով, Կասյան փողոցից բերման ենթարկեցին Գուրգեն Ստեփանյանին, որը տվեց խոստովանական բացատրություն:

Երկու դեպքով էլ գողոնն առգրավվել է:

Կատարվում է քննություն:

Գոռ ՎԱՆՅԱՆ

www.police.am

■

Մայիսի 4-ին ճանապարհային ոստիկանության ծառայողները Ստեփանավան քաղաքի Բաղրամյան փողոցում ստուգման նպատակով կանգնեցրել են «Օպել Զաֆիրա» մակնիշի ավտոմեքենա, որի վարորդը՝ 50-ամյա Արա Թ.-ն, ակնհայտ ալկոհոլային խմիչքի ազդեցության տակ հրաժարվել է ներկայացնել փաստաթղթեր, նաեւ հրաժարվել է օգտվել սթափության աստիճանը որոշող սարքից, ինչի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

Մինչ ավտոմեքենան հատուկ պահպանվող տարածք տեղափոխելը, Արա Թ.-ն հայհոյելով՝ կոտրել է իր ավտոմեքենայի ապակիները, քարով՝ ոստիկանության ծառայողական ավտոմեքենայի դիմապակին: Նա բերման է ենթարկվել ոստիկանության Ստեփանավանի բաժին:

Նախապատրաստվում են նյութեր:

■

Մայիսի 5-ին ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողները Տիգրան Մեծի պողոտայի սուպերմարկետի մոտից, գողություն կատարելու կասկածանքով, բերման են ենթարկել 1987 թ. ծնված Ռուստամ Մ.-ին եւ հրավիրել 33-ամյա մի քաղաքացուհու: Պարզվել է, որ նույն օրը թիվ 58 երթուղու ավտոբուսում Ռուստամ Մ.-ն փորձել է քաղաքացուհու պայուսակից գողություն անել, սակայն բռնվել է ոստիկանության ծառայողների կողմից:

Նախապատրաստվում են նյութեր:

■

Մայիսի 5-ին Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել Վրաստանի քաղաքացի 29-ամյա Սեդա Ի.-ն, որը ոստիկանության Էրեբունու բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 325 հոդվածի (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը) մեղադրանքով:

Նույն օրը Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել 61-ամյա Արամայիս Մ.-ն, որը ոստիկանության Տավուշի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 235 հոդվածի (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը) մեղադրանքով:

Համակարգ

Ոստիկանության լավագույն բաժինը

Սկիզբը՝ էջ 1

Բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Վարդան Վարդանյանի խոսքով՝ լավագույնի կոչմանն արժանանալը ավելի կազմակերպված, ավելի սրտացավ աշխատելու նոր ազդակ է. ձեռք բերածով չեն բավարարվելու: Դպարտությամբ արձանագրում է, որ Էրեբունու ոստիկանները հետեւողական, սկզբունքային, մասնագիտական գիտելիքները մշտապես զարգացնող ծառայողներ են, ինչն ավելի է հեշտացնում իրենց առջեւ դրված խնդիրների պատշաճ իրականացումը: Ըստ ստորաբաժանման ղեկավարի՝ բաժնի ամենացայտուն առանձնահատկություններից են անձնակազմի բարոյահոգեբանական վիճակն ու ծառայությունների միջեւ սերտ համագործակցությունը: Սրանք արդյունավետ աշխատանքի գրավական են:

Քրեական հետախուզության բաժանմունքը ստորաբաժանման զարկերակն է, շարժիչ ուժը: Դանցագործությունների բացահայտման առյուծի բաժինը քրեական հետախույզների շուրջօրյա ծառայության արդյունք է: Բաժանմունքի ղեկավարը հումորով խոստովանում է, որ բողոք ունի. բողոքում է ժամանակից: Դավաստիացնում է, որ ուզում են ավելին անել, բայց հաճախ ժամանակը չի բավականացնում: Զորիկ Ավդիշոեւի հավաստմամբ՝ քրեական հետախուզության բաժանմունքի յուրաքանչյուր ծառայող պատրաստ է հարկ եղած դեպքում օրը քսանչորս ժամ ծառայելու: Անձնակազմը ոչ միայն պատրաստակամ է, այլեւ ունի բարձր պրոֆեսիոնալիզմ՝ թարմ հետքերով բացահայտելու ցանկացած հանցագործություն՝ անկախ ծանրության աստիճանից:

Բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալը, որը վարչական շրջանի օպերատիվ իրավիճակի պատասխանատուներից է, վստահ է, որ Էրեբունու քրեական հետախույզները քրեական հետախույզ են բառի բուն իմաստով: Մամիկոն Դակոբյանի համոզմամբ՝ յուրաքանչյուր ոք պետք է սիրի իր աշխատանքը, իսկ քրեական հետախույզի աշխատանքը իսկական տղամարդու աշխատանք է:

Ոստիկանը դպրոցում հստակ ու կարեւոր անելիքներ ունի. սա կասկածից վեր է: Երկրի ապագան իրավագիտակից սերնդի ձեռքում է, իսկ իրավագիտակից սերնդի դաստիարակումը՝ նաեւ ոստիկանի ձեռքում: Դա նկատում են նաեւ մանկավարժները, ոստիկանության Էրեբունու բաժնի անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի ծառայողները: Ճանապարհային երթեւեկության կանոնների, ընտանեկան բռնության, թմրամոլության, հայրենասիրական թեմաներով զրույցների ընթացքում անչափահասների գործերով ոստիկաններն աշակերտներին հիշեցնում են, որ հանցավորության դեմ պայքարը բոլորի գործն է, իսկ ոստիկանն ուժեղ է նաեւ իրավագիտակից քաղաքացու շնորհիվ: Ուշադրության կենտրոնում են նաեւ անհաշտ եւ սոցիալապես անապահով այն ընտանիքները, որտեղ կան անչափահասներ: Անչափահասների գործերով ծառայողները ջանք չեն խնայում անչափահասներին հակահրավական գործողություններից զերծ պահելու համար: Այս համատեքստում ակտիվ իրականացնում են կանխարգելիչ միջոցառումներ: Բաժանմունքի պետ Կարեն Հովհաննիսյանը փաստում է, որ անչափահասների մասնակցությամբ հանցագործություններ բացահայտելուց եւ կանխարգելիչ աշխատանքներ կատարելուց զատ իրականացնում են նաեւ համապատասխան միջոցառումներ անչափահասների իրավունքների խախտման ու ոտնահարման դեպքեր հայտնաբերելու ուղղությամբ:

Մանրաբեռնված է նաեւ հետաքննության բաժանմունքի աշխատանքը: 2018-ին հետաքննիչները նախապատրաստել են 1843 նյութ. 2017-ի համեմատությամբ՝ 137-ով ավելի: Նախապատրաստած նյութերի հիման վրա նախորդ տարի հարուցվել է 633 քրեական գործ, որոնց շրջանակներում կատարվել են մի շարք գործողություններ: Բաժանմունքի ծառայողները բացահայտել են նաեւ հանցագործության 13 դեպք:

Նախորդ տարի հանցավորության դեմ ակտիվ պայքար են մղել նաեւ համայնքային ոստիկանները, որոնց առջեւ դրված կարեւորագույն խնդիրներից է հասարակություն-ոստիկանություն կապի ամրապնդումը:

Պարեկապահակետային ծառայողների կարելի է հանդիպել վարչական շրջանի ցանկացած վայրում: Նրանց պարտականությունը հասարակական կարգի 24-ժամյա պահպանումն է: Նախորդ տարի բացահայտված դեպքերից 58-ը բացահայտել են 1-ին վաշտի պարեկայինները: Տարբեր իրավախախտումների համար բաժին բերման են ենթարկել 548 մարդու:

Նուբարաշեն վարչական շրջանը սպասարկվում է ոստիկանության Էրեբունու բաժնի Նուբարաշենի բաժանմունքի կողմից: Նախորդ տարի Նուբարաշենում տեղի է ունեցել հանցագործության 99 դեպք: Բաժանմունքի ծառայողների արհեստավարժ գործողությունների շնորհիվ 91-ը բացահայտվել է: Նուբարաշենի ոստիկանները բացահայտումների առումով արձանագրել են գրեթե 100-տոկոսանոց արդյունք: Դանցագործությունների մեծ մասն ուղղված է եղել անձի կյանքի եւ առողջության դեմ. բոլորն էլ բացահայտվել են: Այստեղ եւս չբացահայտված հանցագործությունների եւ հետախուզվողների հայտնաբերման միջոցառումները բարձր մակարդակի վրա են: Բաժանմունքի պետ Վահրամ Խաչատրյանի խոսքով՝ ծառայողները միշտ էլ բարեխղճորեն են կատարում իրենց առջեւ դրված խնդիրները: Իսկ լավագույնի կոչմանն արժանանալը ավելի լավ աշխատելու լրացուցիչ խթան է:

Չնայած արձանագրած հաջողություններին՝ ոստիկանության Էրեբունու բաժնի եւ Նուբարաշենի բաժանմունքի ծառայողները գիտակցում են, որ հանցավորության դեմ պայքարի բոլոր ուղղություններով անելիքներ շատ կան:

Մեզ մնում է բարի ծառայություն մաղթել 2018 թվականի լավագույն ոստիկաններին:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Բացահայտվել է կիբերհանցագործություն

Ապրիլի 29-ին ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում հաղորդում ստացվեց, որ Երեւանում գործող «Պիկոնետ Տեքնոլոջիս» ՍՊ ընկերության աշխատակիցները ԱՄՆ եւ Կանադայի օգտատերերի շրջանում տարածում են համակարգչի անվտանգությանը վերաբերող կեղծ նախազգուշացումներ: Նախազգուշական «Pop-up» հաղորդագրությունն անկախ օգտատիրոջից բացվում է Վեբ դիտարկիչում՝ բրաուզերում, առաջնային պլանում: Լինում է երկու տեսակի. մի դեպքում օգտատերը հնարավորություն է ունենում փակելու պատուհանը, մյուս դեպքում փակելու հնարավորությունը արհեստականորեն բարդացված է լինում՝ ընդհուպ հասցված անհնարինի աստիճանի: Դրանցում նշվում է, որ խնդիրը վերացնելու համար անհրաժեշտ է զանգել անվճար հեռախոսահամարով: Տվյալ հեռախոսահամարի զանգերին եւս պատասխանում են ընկերության աշխատակիցները եւ իբր խնդիրը լուծելու համար զանգած յուրաքանչյուր անձից խաբեությամբ եւ վստահությունը չարաշահելու եղանակով փող պահանջում:

Որպեսզի ավելի մեծանա օգտատիրոջ վճարելու պատրաստակամությունը, հեռախոսազրույցի ընթացքում ընկերության աշխատակիցները նրան ցույց են տալիս իբր համակարգչի բնական աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրները՝ ներկայացնելով դրանք որպես վիրուսի հետեւանքով առաջացած ծայրահեղ ռիսկային եւ վտանգավոր: Որոշ դեպքերում վստահությունն ավելի բարձրացնելու համար ներկայանում են «Մայքրոսոֆթ» ընկերության օգնության թիմի աշխատակիցներ: Խնդիրը լուծելու համար օգտատիրոջից պահանջում են հարյուրից երկու հազար դոլար: Վճարելու համար ընկերության աշխատակիցները պահանջում են սոցիալական ապահովագրության համարը եւ բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ:

Նախապատրաստված նյութերով պարզվել է, որ «Պիկոնետ Տեքնոլոջիս» ընկերության հնդիկ հիմնադիրը Երեւանում վարձակալել է տարածք եւ կազմակերպել նշված հանցավոր գործունեությունը:

Հարուցվել է քրեական գործ՝ խարդախության հատկանիշներով:

Ընկերության վարձակալած տարածքի խուզարկությամբ հայտնաբերվել են հանցագործության գործիք հանդիսացող տասնչորս համակարգիչ, հափշտակված գումարների վերաբերյալ գրառումներ:

Խուզարկության պահին վարձակալած տարածքում է եղել չորս հայ, չորս հնդիկ, որոնք ներգրավված են եղել խարդախություններին, եւ ամեն մեկն ունեցել է որոշակի դերակատարություն: Հանցավոր ողջ գործունեությունը կազմակերպել եւ ղեկավարել է ընկերության հնդիկ տնօրենը:

Խուզարկությամբ հայտնաբերվել է նաեւ թմրանյութ:

Ըստ ձեռք բերված նախնական տեղեկությունների՝ հանցավոր խումբը, ԱՄՆ շուրջ վաթսուն քաղաքացու վստահությունը չարաշահելով, հափշտակել է շուրջ 15 հազար դոլար:

Հարուցվել է քրեական գործ:

«Pop-up» հաղորդագրությունները հիմնականում նախատեսված են գովազդի համար, կարող են ստանալ բոլորը եւ ինքնին իրենցից վտանգ չեն ներկայացնում: Վտանգավոր են նմանօրինակ բովանդակությամբ հաղորդագրությունները, որոնց պատճառով օգտատերերը հեշտությամբ մոլորության մեջ են ընկնում: Հանցավոր ոտնձգություններից եւ ֆինանսական կորուստներից խուսափելու համար, նման հաղորդագրություններ ստանալու դեպքում խորհուրդ ենք տալիս դիմել մասնագետներին:

Էրիկ ԱՍՏՎԱՇԱՏՐՅԱՆ

Հետախուզվում էր կողոպուտի համար

Անցած տարվա վերջին ոստիկանության Էրեբունու բաժնում կողոպուտի վերաբերյալ հաղորդում էր ստացվել: Դեկտեմբերի 28-ին բաժին դիմած կինը հայտնում էր, որ Արցախի փողոցում անհայտ անձը հափշտակել է պայուսակն ու դիմել փախուստի: Պայուսակում եղել էին անձնագիր, սոցքարտ, 120 հազար դրամ, բանկային եւ այլ քարտեր:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում՝ Էրեբունու քրեական հետախույզներին հաջողվեց պարզել կողոպուտը կատարած անձի ինքնությունը. մշտական բնակության վայր չունեցող, 21-ամյա Վահագն Պետրոսյանն էր: Նրա նկատմամբ հայտարարվեց հետախուզում:

Որոնողական աշխատանքների եւ օպերատիվ միջոցառումների շնորհիվ ապրիլի 29-ին ոստիկանության Էրեբունու բաժնի եւ ՊՊԾ գնդի առաջին վաշտի ծառայողները Վահագն Պետրոսյանին հայտնաբերեցին Արմավիրի մարզի Արաքս գյուղի դաշտավայրում:

Էրեբունու ոստիկաններին հաջողվել է պարզել, որ Վահագն Պետրոսյանը մայրաքաղաքի Էրեբունի եւ այլ վարչական շրջաններում կատարել է նաեւ բնակարանային գողություններ, անձնական ունեցվածքի գաղտնի եւ բացահայտ հափշտակություններ:

Հարուցվել է քրեական գործ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Անցանկալի հյուրեր

Լուսինե Մաթեւոսյանն ընտանիքի հետ ապրում էր Երեւանում: Երբեմն երեխաների հետ հայրական տուն՝ Վարդենիս էր գնում: Լուսինեի մայրը՝ Վարսենիկը, աղջկա եւ թոռների ներկայությունը միայն մի քանի օր էր հանդուրժում: Սովոր էր հանգիստ ապրելակերպին:

Վարսենիկը աղջկանից դժգոհությունը չէր թաքցնում. չարաճճի թոռների վրա խոսում էր, դիտողություն անում: Արդյունքում՝ մայր ու աղջիկ հաճախ վիճում էին: Լուսինեն, սակայն, Վարդենիսում մնում էր այնքան, ինչքան իրեն պետք էր: Հայրական տնից գնալը կապված էր ամուսնու արտագնա աշխատանքից վերադառնալու հետ, այսինքն՝ ամիսներ էր տեւում:

Հերթական անգամ, երբ ամուսինը՝ Վարդանը, մեկնեց Ռուսաստան, Լուսինեն երեխաների հետ ուղեւորվեց Վարդենիս:

Վարսենիկն ամեն օր դիտողություն էր անում թոռներին, ինչը դուր չէր գալիս Լուսինեին: Մոր ու աղջկա վեճերը շարունակական բնույթ էին կրում: Բուռն վեճերի ընթացքում Լուսինեն երբեմն նաեւ ձեռք էր բարձրացնում մոր վրա: Իսկ Վարսենիկը վրեժ լուծելու համար ուտելիքը փակի տակ էր պահում, որպեսզի անցանկալի հյուրերը օր առաջ հեռանային ու իրեն հանգիստ թողնեին:

Հերթական վեճից հետո Լուսինեն ծեծեց մորը՝ վնասելով նրա աչքի եղջրաթաղանթը: Վարսենիկը դիմեց բուժօգնության:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Վարդենիսի բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապատրաստման ընթացքում մայր ու աղջիկ բացատրություններ տվեցին:

Ըստ դատաբժշկական փորձաքննության եզրակացության՝ Վարսենիկ Ավետիսյանին պատճառվել էր թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով:

Հարուցված քրեական գործով կատարվում է քննություն:

«Դարահակյան» ցուցաբերում

Երեւանաբնակ Անդրանիկ Հարությունյանն ընկերների՝ Վարուժանի եւ Արամի հետ իր մեքենայով ուղեւորվեց Ալավերդի: Ճանապարհին անցավ թեթեւ, խոսքաշատ ու հիշողություններով հագեցած: Տեղ հասնելով՝ նաեւ կերան-խմեցին:

Հետդարձի ճանապարհին մայրուղում մի զինվորական համազգեստով երիտասարդ խնդրեց իրեն հասցնել Վանաձոր: Անձանոթին հասցրին Վանաձոր: Ինչ-ինչ գործերով Անդրանիկը իջավ մեքենայից: Ընկերները՝ Վարուժանը եւ Արամը, քնած էին:

Լուսնյակ գիշեր էր, իսկը «քարվան կտրելու»: Տարածքում կայանված «Մերսեդես» մակնիշի մեքենան չվրիպեց Անդրանիկի աչքից: Որոշեց գողանալ լուսարձակները եւ հիշողության սարքը: Մտահղացումը իրականություն դարձրեց ու ավարը բեռնախցիկում դնելով՝ ճանապարհը շարունակեց: Սակայն քիչ անց նրա մեքենան կանգնեցրին գիշերային շրջագայություն կատարող պարեկապահակետային ծառայության ոստիկանները: Խուզարկությամբ մեքենայի բեռնախցիկից հայտնաբերվեց գողոնը:

Ոստիկանության Բազումի բաժնում նախապատրաստվեցին նյութեր: Անդրանիկ Հարությունյանը խոստովանական բացատրություն տվեց:

Նա կատարել էր արարք՝ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Սկիզբը՝ նախորդ համարում

Ավանդույթն ընդդեմ հանցավորության

Կորեան հիմնականում տնային տնտեսուհիների երկիր է: Կորեացի կանանց մեծ մասը չի աշխատում, քանի դեռ անչափահաս երեխա ունի:

Կորեական թաղամասերն իրար հետ կապված են սոցիալական կապերով, մարդիկ իրար լավ են ճանաչում: Ցանկացած երեխայի վատ արարքի մասին մայրն իմանում է րոպեներ անց: Կորեացիների հետ կողք կողքի ապրած շատերը փաստում են, որ վատ արարք կատարած երեխային ամենախիստը պատժում է հայրը:

Մեծ դեր է խաղում նաեւ այն հանգամանքը, որ կորեական հասարակության մեջ մրցակցային սուր պայքար կա: Կորեայում յուրաքանչյուր ծնողի համար հպարտություն է, երբ երեխան ունի լավագույն համալսարանի դիպլոմ: Կորեայում չեք կարող հանդիպել Բիլ Գեյթսի եւ Սթիվ Ջոբսի նման մարդկանց, որոնք հաջողության են հասել առանց համալսարան ավարտելու:

Վաղ մանկությունից կորեացին գիտի, որ իր կյանքը, ճակատագիրը, եկամուտները, շրջապատի վերաբերմունքն իր հանդեպ, նույնիսկ՝ հաջող ամուսնությունը, կախված են այն բանից, թե ինչպես կհանձնի ընդունելության քննությունները, ինչպես կսովորի եւ կավարտի համալսարանը, ինչպիսի մասնագետ կդառնա:

Ընդունելության քննություններում գնահատվում է միայն գիտելիքը. կաշառքը, ծնողների հարստությունը, կապերը ոչնչով չեն կարող օգնել քննություններին եւ ուսմանը:

Սովորելու հնարավորություն բոլորն ունեն, բայց դա տարիների տքնաջան աշխատանք է պահանջում, որն սկսվում է տասնմեկ-տասներկու տարեկանից: Բոլոր կորեացի երեխաները գիտեն, որ հենց այդ ժամանակ պետք է դնեն հետագա բարեկեցիկ կյանքի հիմքը:

Մեծահասակներն ամեն ինչ անում են, որ պատանին շքամուտքերում ծխելու, թրեւ գալու կամ էլ պարապ ժամանակ անցկացնելու ժամանակ չունենա: Ով նման հիմարություններով է լցնում իր կյանքը, գիտի, որ հետագայում, բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորություն չի ունենա. Կորեայում դա ապացուցված բանաձեւ է:

Դպրոցական տարիներին պետք է սովորել՝ հետագայում անհաջողակ չլինելու համար: Կորեայում անհաջողակներին չեն սիրում:

Հաջորդ հանգամանքն այն է, որ կորեացիները առանձնահատուկ ակնածանք ունեն պետական կանոնակարգերի եւ օրենքների հանդեպ: Կարելի է վստահ ասել, որ դրա արմատները գնում են դեպի Կոնֆուցիոսի փիլիսոփայությունը:

Մեծ դեր ու նշանակություն ունի նաեւ հրազենի վաճառքի ուժեղ վերահսկողությունը, որը գալիս է այն ժամանակներից, երբ կորեական իշխանությունները վախենում էին, որ լեռներում պարտիզաններ կհայտնվեն, եւ խիստ հսկողություն սահմանվեց զենքի վաճառքի ու շրջանառության վրա: Կորեայում զենքի առեւտուրն արգելված է:

Ինչն էլ որ լինի պատճառը՝ կորեացիները զերծ են մնում գողությունից, կողոպուտից, ավազակությունից: Դրա համար էլ Սեուլի ու կորեական այլ քաղաքների փողոցներում օրվա ցանկացած ժամի անվտանգ է:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Զվարճալի ամփոփագիր

«Հյուրընկալել» էր

56-ամյա Մովսեսից ահազանգ է ստացվել, որ երեք օր առաջ հյուրընկալվել է վարձակալական հիմունքներով ապրող իր վաղեմի ծանոթ, 34-ամյա Արթուրին, որտեղ տանտերը հյուրասենյակի սեղանի վրայից գողացել է իր բջջային հեռախոսն ու ժամացույցը:

Վնասի չափը պարզվում է:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ վաղեմի ծանոթին հայտնաբերելու ուղղությամբ:

«Հյուրընկալվել» էր

Քրեական հետախույզները, ստացված օպերատիվ տեղեկություններն իրացնելիս, գողություն կատարելու կասկածանքով, բաժին են հրավիրել 37-ամյա Գոռին: Նա խոստովանել է, որ անցած տարվա նոյեմբերին հյուրընկալվելով իր 80-ամյա հարեւանի տանը, բակից գողացել է վեց կգ կարմիր լոբի եւ երկու լիտր խաղողի օղի:

Մեծահոգի տանտերը նախկինում ոստիկանություն չի դիմել:

Տատիկը հերքեց

Սամվելն ահազանգել է, թե հարեւան տատիկն իրեն անհանգստացնում է:

Մեկնած ոստիկանները գտել են տատիկին: 85-ամյա կինը հայտնել է, որ բակում, վիճաբանության ժամանակ, Սամվելն ու նրա եղբայրը ծեծել են իրեն:

Ձեռնարկվում են միջոցառումներ «անհանգստացած» եղբայրներին հայտնաբերելու ուղղությամբ:

Խաչիկն ու Նորիկը

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ «գլխի սալջարդ վերք» ախտորոշմամբ բուժօգնության է տեղափոխվել յոթ տարեկան Խաչիկը:

Պարզվել է, որ շենքի բակում խաղալիս քարով Խաչիկի գլխին է խփել նրա հասակակից Նորիկը:

Խորթություն

Ոստիկանություն է զանգել 40-ամյա Արտակը եւ հայտնել, որ տանը, անձնական հարցերի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում, 63-ամյա խորթ հայրը երկու անգամ բռունցքով խփել է իր քթին:

Հարազատը գոնե կապտակեր...

Ձեռնարկվում են միջոցառումներ խորթ հորը հայտնաբերելու ուղղությամբ:

Շանտղություն

35-ամյա Էլինան, վարելով «Օպել Զաֆիրա» մեքենան, Երեւան-Սեւան ճանապարհին նկատել է անցնող շանը եւ չբախվելու փորձ արել: Բայց կորցրել է կառավարումը, եւ մեքենան հայտնվել է ձորակում: Պատահարի հետեւանքով Էլինան ու եւս երկու հոգի ստացած մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Շան մասին այլ տեղեկություն չկա:

Եղբայրները

Խոհարարից ահազանգ է ստացվել, թե եղբայրը լինգով քանդում է տունը:

Մեկնած տեսուչը բաժին է հրավիրել եղբայրներին: Նրանցից մեկը հաղորդում է տվել, որ իրենց տան բակում, վիճաբանության ժամանակ, եղբայրը քարերով խփել է իր գլխին, ապա կծել է ձեռքը՝ պատճառելով մարմնական վնասվածք:

Կինը

Ոստիկանություն է զանգել 36-ամյա մի տղամարդ եւ հայտնել, որ կինը իրենց բնակարանից գողացել է իր մոր ոսկյա զարդերը՝ պատճառելով 300 հազար դրամի վնաս:

Կինը հրավիրվել է ոստիկանություն, տվել խոստովանական բացատրություն եւ բաց թողնվել:

Ձեռնարկվում են միջոցառումներ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ մայիսի 2-ից 8-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 32 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 2-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 1-ը՝ կողոպուտի, 6-ը՝ գողության,1-ը՝ գողության փորձի, 2-ը՝ խարդախության, 1-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու, 2-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 4 հետախուզվող:

Արձանագրվել է 82 ճանապարհատրանսպորտային պատահար. 7 մարդ զոհվել է, 122-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 25 դեպք. 2 մարդ զոհվել է, 25-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Մայիսի 6-ին Երեւանի Խանջյան եւ Հերացու փողոցների թունելում իրար են բախվել «Մերսեդես» եւ «ՎԱԶ-11183» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-11183»-ի վարորդը եւ 23-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 6-ին Երեւանի Մաշտոցի պողոտայի եւ Արգիշտիի փողոցի խաչմերուկում իրար են բախվել «Նիսան» եւ «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ի 27-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 6-ին Երեւանի Հալաբյան եւ Մարգարյան փողոցների խաչմերուկում անհայտ ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 79-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 6-ին Երեւանի Տիգրան Մեծի պողոտայում իրար են բախվել «Կիա» եւ «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ի 28-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 6-ին Երեւանի Կասյան փողոցում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 37-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 6-ին Երեւանի Բաբաջանյան փողոցում «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 65-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 6-ին «ԳԱԶ-322132» մակնիշի ավտոմեքենան Երեւանի Ռուբինյանց փողոցում բախվել է էլեկտրասյանը, ինչի հետեւանքով մեքենան մասամբ այրվել է, իսկ 33-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 7-ին Երեւանի Շահումյան 16-րդ փողոցում կայանված «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը ինքնաբերաբար առաջ ընթանալով՝ վրաերթի է ենթարկել 48-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 7-ին Երեւանի Սաֆարյան փողոցում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 24-ամյա քաղաքացու: Քաղաքացու գրկից 1-ամյա դուստրն ընկել է. քաղաքացին ու երեխան մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 7-ին Մասիս քաղաքի Երեւանյան փողոցում «Ակուրա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 11-ամյա աղջկա եւ իր մեքենայով տեղափոխել հիվանդանոց:

■

Մայիսի 7-ին Վանաձոր-Ալավերդի ճանապարհի 1-ին կմ-ին իրար են բախվել «ԴԱՖ» բեռնատար եւ «Նիսան Տիանա» մակնիշի ավտոմեքենաներ. «Նիսան Տիանա»-ի վարորդը եւ 31-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 7-ին Աբովյան քաղաքի Ավագյան փողոցում անհայտ մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 13-ամյա աղջկա եւ դիմել փախուստի:

■

Մայիսի 7-ին «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենան Երեւան-Մեղրի ճանապարհի 273-րդ կմ-ին դուրս է եկել հանդիպակաց գոտի եւ բախվել «Կիա Սեռատո» մակնիշի ավտոմեքենայի. «Մերսեդես Բենց»-ի 46-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 7-ին Երեւան-Մեղրի ճանապարհի 93-րդ կմ-ին «ՎԱԶ-2105» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ կողաշրջվել. 51-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Լեգենդար հետախույզը. Գեւորգ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Գեւորգ Վարդանյանը (1924-2012 թթ., ծածկանունը՝ Ամիր, Անրի) հետախուզական ողջ գործունեությունն իրականացրել է կնոջ՝ Գոհարի (ծածկանունը՝ Անիտա) հետ: Ցավոք, առ այսօր սակավ տեղեկություններ են հայտնի, թե ամուսնական զույգը երբ եւ որ երկրներում է գործել: Երբ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հարցրեց այդ մասին՝ Գեւորգ Վարդանյանը հայտնեց, որ «աշխատել են» մոտ 100 երկրներում, սակայն չնշեց, թե կոնկրետ որ երկրներում: Հետախույզը մնում է հետախույզ՝ նույնիսկ Ռուսաստանի Դաշնության Գերագույն գլխավոր հրամանատարի ներկայությամբ:

1940 թ. փետրվարից սկսած՝ Գեւորգ Վարդանյանը պաշտոնապես սկսել է համագործակցել ԽՍՀՄ արտաքին հետախուզության հետ: Նրա ապագա կինը՝ Գոհարը, նրանից երկուսուկես տարով փոքր էր: Համատեղ ապրեցին 65 տարի: Ռուսաստանի արտաքին հետախուզության առաջին տնօրեն Եվգենի Պրիմակովը Գեւորգին նրա կնոջ մասին ասել է. «Նա Ձեր լավագույն հավաքագրումն է»:

Հայտնի են Գեւորգ Վարդանյանի խմբի գործունեության որոշ մանրամասներ 1943 թ. Թեհրանում, որտեղ պետք է հանդիպեին հակահիտլերյան դաշինքի երկրների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի ղեկավարները: Նույնիսկ նկարահանվել է գեղարվեստական կինոնկար, որի երաժշտության հեղինակն էր Շարլ Ազնավուրը: Ֆիլմում խաղացել են այն ժամանակվա նշանավոր դերասանները: Իհարկե, ֆիլմում շատ դեպքեր եւ փաստեր փոխված են, սակայն այն շարունակում է հետաքրքրել մարդկանց:

Մեծահասակների մեծամասնությունը զբաղվում է այգու խնամքով, թոռնիկներին է ժամանակ տրամադրում, սակայն Ռեյ եւ Ֆեյ Քոուփլենդներին նման հեռանկարը բնավ չէր հրապուրում: Ամուսիններն ավելի «հետաքրքիր» զբաղմունք գտան՝ մարդասպանություն: Նրանք առաջին ու վերջին մոլագար զույգը չէին, բայց ամենատարօրինակն էին:

Ծանոթացել էին 1940 թվականին, երբ Ռեյը քսանվեց տարեկան էր, իսկ Ֆեյը՝ տասնինը: Կես տարի անց ամուսնացան: Չորս տղա եւ մեկ աղջիկ ունեցան...

Երկար թափառումներից հետո Քոուփլենդների ընտանիքը հաստատվեց Միսսուրիում: Մինչ ամուսնությունը Ռեյը խնդիրներ էր ունեցել օրենքի հետ. մեղադրվում էր անասնագողության եւ կեղծարարության մեջ: Ամուսնությունն էլ նրան չուղղեց. հարեւանները նրան տանել չէին կարողանում կնոջը եւ երեխաներին ծաղրելու, ստորացնելու համար: Հետագայում Ռեյը գիտակցելով, որ ավելի շատ բանտում է լինում, քան ազատության մեջ, որոշ հետեւություններ արեց եւ արդեն իր «գործն» անաղմուկ էր անում: Այդպես սկսվեց զույգի քրեական կարիերան:

1989 թվականի օգոստոսի 20-ին Նեբրասկայի արտակարգ իրավիճակների «թեժ գծին» տարօրինակ հաղորդում ստացվեց: Ոմն Ջեք Մաքորմիկ հայտնում էր, որ որոշ ժամանակ աշխատել է տարեց ամուսինների ֆերմայում: Տերը վարձում էր թափառաշրջիկների, որպեսզի նրանք ուրիշների անասունները քշեն-բերեն իր ֆերմա: Գիտենալով, որ Մաքորմիկը տեղյակ է կատարվածից, տերը փորձել էր նրան սպանել...

Իսկ մեկ այլ մահափորձի ենթարկված հայտնում էր, որ ֆերմայի տարածքում տեսել է մարդու ոսկորներ...

Տեղեկատվությունը փոխանցվեց նահանգի պատկան մարմիններին: Իրավապահները ստացված տեղեկությունները վերլուծելուց հետո հասկանալով, թե ում հետ գործ ունեն, որոշեցին նախ համապատասխան փաստեր ու ապացույցներ հավաքել, հետո նոր խուզարկել ֆերմայի տարածքը:

1989 թվականի հոկտեմբերի 9-ին շերիֆ Լելենդ Օ'Դելը քառասուն ոստիկանների ուղեկցությամբ հայտնվեց զույգի ֆերմայում՝ խուզարկության: Շուրջ մեկ շաբաթ ոստիկաններին չէր հաջողվում անգամ փոքրիկ ապացույց գտնել: Միայն մեկ շաբաթ անց խորդանոցում հայտնաբերեցին երեք դիակ: Զոհերին սպանել էին ծոծրակին կրակելով: Սպանվածները քսան-մեկ-քսանյոթ տարեկան երիտասարդներ էին:

Հաջորդ շաբաթ ավելի սարսափելի բացահայտումներ եղան. մեկ այլ խորդանոցում հայտնաբերեցին չորրորդ դիակը: Որոշ ժամանակ անց նշված վայրից քիչ հեռու հայտնաբերվեց քսանյոթամյա մի երիտասարդի դիակ: Երկու դեպքում էլ մահը վրա էր հասել ծոծրակին արձակված գնդակից:

Տան խուզարկության ժամանակ ոստիկանությունը հայտնաբերեց 22 մմ տրամաչափի զենք: Փորձաքննությամբ պարզվեց, որ դա նույն զենքն է, որով սպանվել էին երիտասարդները: Վարձու աշխատողներից Ռեյը ազատվել էր անմիջապես, երբ նրանց ծառայության կարիքն այլեւս չէր զգացվել: Փաստաթղթերի մեջ ոստիկանները հայտնաբերեցին վարձու աշխատողների ցուցակ՝ տասներկու անուն-ազգանուն: Բոլորի կողքին հատուկ նշան էր արված: Տասներկուսից յոթի դիակն այդպես էլ իրավապահները չկարողացան հայտնաբերել. նրանց համարեցին անհայտ կորած:

Թվում էր, թե Ֆեյը տեղյակ չէ ամուսնու գործողություններից: Բայց այդպես չէր: Ցուցակը գրված էր նրա ձեռքով: Դա հաստատվեց փորձաքննության եզրակացությամբ: Բացի այդ՝ տանը կար ծածկոց, որը կարված էր սպանվածների հագուստներից: Նշված փաստերն ապացուցում էին Ֆեյի ներգրավվածությունը հանցագործություններին: Տատիկը լավ գիտեր՝ ինչով է զբաղված կողակիցը, բայց այդպես էլ չխոստովանեց: Մեղադրող կողմը Ֆեյին գործարք առաջարկեց արդարադատության հետ. պատմում է՝ որտեղ են թաղված յոթ սպանվածների դիակները, եւ նրան առաջադրված մեղադրանքը վերարակում են: Դրանից հետո հանցագործ տատիկը ճաղերի հետեւում կանցկացներ ընդամենը մի քանի ամիս: Առաջարկությունը Ֆեյը մերժեց՝ պնդելով, որ տեղյակ չի եղել սպանություններին:

Ամուսիններին մեղադրանք առաջադրվեց սպանության հոդվածի միաժամանակ հինգ կետերով: Ֆեյին դատապարտեցին չորս մահապատժի՝ ներարկման միջոցով: Յոթանասունհինգամյա Ռեյին սպասում էր նույն դատավճիռը, բայց գործը մահապատժի չհասավ: Ռեյը, որը փորձում էր մինչեւ դատը անմեղսունակ ձեւանալ, մահացավ բանտում՝ սպասելով դատավճռին, իսկ Ֆեյի դատավճիռը փոխեցին:

2002 թվականին նրան ազատ արձակեցին վատառողջության պատճառով: Մեկ տարի անց Ֆեյը մահացավ տարեցների տանը՝ ութսուներկու տարեկանում:

Արդյո՞ք Ֆեյն ամուսնու գործընկերն էր՝ մինչ օրս հստակեցված չէ: Նա պատմել է միայն, որ հաճախ ամուսնու կողմից ենթարկվում էր ֆիզիկական բռնության, ինչը հաստատել են հարեւաններն ու երեխաները:

Ամուսիններն այդպես էլ ճշմարտությունն իրենց հետ գերեզման տարան...

70-ամյա մոլագարներ



Ապագա առասպելական հետախույզի առաջին ուսուցիչները եղել են հայրը եւ Իրանում խորհրդային հետախուզության ռեզիդենտ Իվան Աղայանցը:

Հակահետախուզության փոխգնդապետ Իգոր Ատամենկոն վերհիշում է Վարդանյան ամուսինների հետ իր հանդիպումներից մեկը՝ 2000-ական թվականներին: Ատամենկոյի հարցին, թե քանի լեզվի են տիրապետում, Վարդանյան ամուսինները պատասխանում են՝ վեց, սակայն նրանց խոստովանությամբ՝ այդ ամենի «ոսկե բանալին» հայերենն էր: Գ. Վարդանյանը հայերենն օգտագործում էր այն վայրերում, որտեղ կար հայկական սփյուռք: Այստեղից կարելի է ենթադրել, որ Վարդանյանների գործունեության շրջանակը գրեթե ողջ աշխարհն էր, գլխավորապես՝ Մերձավոր Արեւելքը, Ֆրանսիան, Շվեյցարիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը: Իր 30-ամյա հետախուզական գործունեության ընթացքում Գեւորգ Վարդանյանը բացահայտել է հարյուրավոր լրտեսների: Միայն Իրանում հետախուզական գործունեության ընթացքում նրա հետախույզների եւ գործակալների թիվն անցնում է 400-ից:

1936 թ. Վարդանյանների ընտանիքը բնակություն է հաստատում Թեհրանում, որտեղ ընտանիքի հայրը զբաղվում է հրուշակեղենի արտադրությամբ: Կարճ ժամանակ անց «Վարդանյան» ընկերության թխվածքները լայն տարածում են գտնում ողջ Իրանում: Ոչ ոք գլխի չէր ընկնում, որ նա խորհրդային հետախույզ է, եւ միայն Գեւորգն էր տեղյակ հոր հետախուզական գործունեության մասին, որին ինքն էլ շուտով մասնակից է դառնում:

1942 թ. սկզբին Իվան Աղայանցին հայտնի է դառնում, որ անգլիացիները Թեհրանում ռադիոսիրողների ակումբի անվան տակ կազմակերպել են հետախուզական դպրոց: Գ. Վարդանյանը հանձնարարություն է ստանում ամեն գնով թափանցել այդ դպրոց: Երիտասարդ Գեւորգին կամ Ժոռային, ինչպես անվանում էին մտերիմները, անմիջապես ընդունեցին՝ հաշվի առնելով լեզուների իմացությունը եւ այն, որ նա ցանկանում է հետախույզ դառնալ, որպեսզի հարստանա: Ընդունվելով դպրոց՝ Ամիրը պարբերաբար Ի. Աղայանցին զեկուցում էր հայթայթած հետախուզական տեղեկությունները, որոնք հնարավորություն են տալիս կարճ ժամանակ անց ոչ միայն բացահայտել ԽՍՀՄ ուղարկված անգլիական գործակալներին, այլեւ հավաքագրել նրանց: Անգլիացիները որոշ ժամանակ անց գլխի ընկան, որ իրենց «սաները» բացահայտված են, եւ հարկադրված էին հետագա ձախողումներից խուսափելու նպատակով փակել դպրոցը:

Շարունակելի

Պատրաստեց **ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Կոքերի դավադրություն

Սպանության փաստով քրեական գործը հարուցվել էր 2012 թվականի հունվարին: Այն կասեցվեց հանցագործությունը կատարած անձի գտնվելու վայրն անհայտ լինելու հիմքով: Սպանության մեջ կասկածվող Ռուբեն Կիրակոսյանին հայտնաբերելու ուղղությամբ հայտարարվեց միջազգային հետախուզում: Ռուբեն Կիրակոսյանը հայտնաբերվեց յոթ տարի անց՝ Բելառուսի Հանրապետությունում եւ օպերատիվ խմբի ուղեկցությամբ տեղափոխվեց Հայաստան:

Ի սկզբանե Ռուբեն Կիրակոսյանն առնչություն չուներ վիճահարույց պատմության հետ, բայց իր ագրեսիվ, անխոհեմ վարքագծով այն ամփոփեց ողբերգությամբ՝ դառնալով քրեական գործով անցնող մեղադրյալ:

Արագածոտնի մարզի բնակիչներ Արամ Հովհաննիսյանն ու Արման Ասատրյանը 2010 թվականի գարնանը պայմանավորվածություն ձեռք բերեցին՝ Արմանը, երեք հազար դրամ օրավարձով, որպես տաքսի վարելու էր Արամի «ՎԱԶ-2106»-ը: Մեքենայի անսարքությունների հետ կապված մեծ ծախսերը հոգալու էր մեքենայատերը, մանր ծախսերը՝ վարորդը:

Երկուստեք շահավետ գործարք էր, եւ մեկ տարուց ավելի կողմերը սահուն հարաբերությունների մեջ էին, մինչեւ այն օրը, երբ Արման Ասատրյանը հետընթաց կատարելիս վնասեց մեքենայի անվաթեւը: Մեծ ծախս չէր եւ, պայմանավորվածության համաձայն, պետք է հոգար ինքը: Բայց մեքենայատերը, բոլոր անսարքությունները վերացնելու պատճառաբանությամբ, վերցրեց մեքենան ու տարավ ավտոնորոգողի մոտ: Տասը օրից մեքենան պատրաստ էր գործարկման, բայց Արմանի ու Արամի գործընկերային հարաբերություններն այլ ընթացք ստացան:

Արամը երկու հարյուր հազար դրամի պահանջ ներկայացրեց՝ որպես մեքենայի անվաթեւի նորոգման ծախս ու տասնօրյա օրավարձ: Արմանն առարկեց. եթե մեքենան գործի մեջ չէր եղել՝ ի՞նչ օրավարձ: Ամեն մեկն իր «ճիշտը» պնդեց՝ գործնական հարաբերությունները տանելով թշնամական դաշտ: Վեճ, փոխադարձ անպատվություն ու՝ ոչ մի լուծում:

Արման Ասատրյանը զանգեց արտասահմանում գտնվող հորաքրոջ որդուն՝ Ռուբեն Կիրակոսյանին, ու բողոքեց նրա կնոջ ազգականից՝ Արամ Հովհաննիսյանից: Ռուբենը հարցին յուրովի լուծում տվեց՝ ուղարկելով Արամի պահանջած փողը:

Թվում է՝ ամեն ինչ պետք է հարթվեր, նույնիսկ՝ շարունակվեին նախկին գործնական հարաբերությունները: Բայց Արամ Հովհաննիսյանը փողային նոր պահանջ ներկայացրեց: Հաշվարկներ անելիս իբր սխալվել էր՝ Արմանը եւս իննսուն հազար դրամ պետք է տար:

Արմանը կրկին զանգեց հորաքրոջ որդուն: Փող ուզելու համար չզանգեց, այլ, որ նա հասկացնի կնոջ բարեկամին, որ ինքը ոչ մի կոպեկ էլ պարտք չէ, դեռ մի բան էլ ավելի է տվել:

Պարտք ու պահանջի շուրջ խոսակցությունները տեղափոխվեցին Ռուբեն Կիրակոսյանի ու Արամ Հովհաննիսյանի «տարածք» ու արագ փոխվեցին հեռախոսավեճերի: Փոխադարձ անպատվությունն ու վիրավորանքը շարունակվեցին նաեւ այն ժամանակ, երբ Ռուբեն Կիրակոսյանը 2012-ի դեկտեմբերի վերջերին գնաց գյուղ:

Կնոջ բարեկամի՝ հեռախոսով հնչեցրած վիրավորանքներից Ռուբենի զայրույթը չէր մեղմվել: Նրան պատժելու միտքը սեւեռուն էր դառնում, հատկապես, երբ հիշում էր Արմանին տված նրա սպառնալիքը՝ «Փողը չստացա՝ քեզ էլ, քո Ռուբենին էլ մորթելու եմ»:

Ընկերներից մեկի միջոցով Ռուբեն Կիրակոսյանը Արամ Հովհաննիսյանին հանդիպման կանչեց: Այդ ընկերոջ հետ էլ ժամադրավայր գնաց:

Նախաքննական մարմնին տված ցուցմունքում քրեական գործով վկա անցնող ընկերը նշել էր, որ երբ Ռուբենն ու ինքը գնացել են պայմանավորված վայր, Արամն արդեն այնտեղ էր: Արամը մոտեցել եւ սկսել էր գոռալ, քաշքշել Ռուբենի հագուստից:

Արամը սպառնում էր վնասել Ռուբենին, բայց եթե դա ընդամենը բանավոր սպառնալիք էր, ապա Ռուբենը այն գործնականում է կիրառում: Հանդիպման գնացել էր ատրճանակով զինված եւ այն գործի դրեց...

Վկան նախաքննական մարմնին տված ցուցմունքում նշել էր, որ երբ Ռուբենը Արամի ոտքերին էր կրակել, նա ոչ թե ընկել, այլ առաջացել էր դեպի Ռուբենը, որ խփի: Հետո արդեն հնչել էր երկրորդ կրակոցը, բայց՝ արդեն Արամի որովայնին...

Հիվանդանոց տեղափոխված երիտասարդի կյանքը փրկել չհաջողվեց:

Ահազանգելով հիվանդանոց մեկնած օպերատիվ խմբին՝ Արամին ուղեկցած ընկերը հայտնել էր, իբր կրակողն անծանոթ էր իրեն: Ու մինչ օպերատիվ-հետախուզական միջոցառումներով կճշտվեին դեպքի հանգամանքները, կպարզվեր կրակողի ինքնությունը, Ռուբեն Կիրակոսյանը մեկնեց հանրապետությունից:

Կասեցված քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Մանկության ընկերոջ սպանությունը

Արմավիրի մարզի բնակիչ Աշոտ Բ.-ն մեկնում էր ՌԴ՝ արտագնա աշխատանքի: Մանկության ընկեր Ենոք Կ.-ն, օգտվելով Աշոտի՝ Ռուսաստանում գտնվելու հանգամանքից, ինտիմ կապի մեջ էր մտել նրա կնոջ՝ Նինայի հետ, պարբերաբար զանգել էր նրան, հանդիպել:

Աշոտը սկսել էր կասկածել, թե կինն իրեն դավաճանում է մանկության ընկերոջ հետ: Նա ստուգել էր կնոջ հեռախոսը ու համոզվել, որ Ենոքը պարբերաբար զանգել էր կնոջը: Կնոջից հարցրել էր այդ զանգերի մասին, կինն ամուսնուն հավաստիացրել էր, թե Ենոքը զանգել էր Աշոտի մասին տեղեկանալու նպատակով: Ամուսնու հետ խոսակցությունից հետո կինը որոշել էր խզել կապը, բայց Ենոքը շարունակել էր զանգել, հանդիպելու առաջարկություններ անել ու փնովել Աշոտին:

Ըստ դատական ակտի՝ 2015 թ. մարտ-ապրիլին, երբ Աշոտը Հայաստանում էր, Նինան զանգել է Ենոքին՝ ամուսնու տեղն իմանալու համար: Ենոքն ասել է, թե Աշոտը փող է տանուլ տվել: Ենոքն այդ երեկո մի քանի անգամ զանգել է Նինային, բայց նա չի պատասխանել: Ուշ երեկոյան Աշոտը տուն վերադառնալով՝ նկատել է, որ կնոջ հեռախոսին բաց թողնված զանգեր կան, պարզել է, որ զանգողը եղել է Ենոքը: Արթնացրել է կնոջը, պահանջել հայտնել ճշմարտությունը՝ խոստանալով, որ կների: Նինան խոստովանել էր, որ տեւական ժամանակ Ենոքի հետ ինտիմ կապ է ունեցել, բայց վերջին շրջանում նրա հետ չի հանդիպել:

2015 թ. հունիսի 14-ին Աշոտը գնացել է գարեջրատուն, որտեղ հանդիպել է Ենոքի ընկերուհուն: Քիչ անց գարեջրատուն էր մտել նաեւ Ենոքը, ցանկացել Աշոտին հյուրասիրել, բայց նա հրաժարվել էր, դուրս էր եկել, նստել գարեջրատան դիմացի զրուցարանում: Երբ Ենոքն ու նրա ընկերուհին ժպտալով դուրս են եկել գարեջրատանից, Աշոտին թվացել է, թե ծաղրում են իրեն: Նրանք մեքենա են նստել ու հեռացել: Աշոտը խանդի հողի վրա ցանկացել է պատժել Ենոքին: Նա մեքենայով ընթացել է նրանց հետեւից ու Ենոքի մեքենան տեսել է գյուղին հարակից դաշտում կանգնած: Աշոտը, ըստ դատական ակտի, գնացել է տուն, մեքենան կանգնեցրել ավտոտնակում, տնից պտուտակահան վերցրել ու ոտքով գնացել է դեպի Ենոքի մեքենան: Թաքնվել է Ենոքի մեքենայի մոտ: Ըստ Աշոտի՝ ինքը լսել է, որ Ենոքն ընկերուհուն ասել է, թե երկու աղջիկ ունի ու մի «լեւի» տղա: Աշոտը կասկածել է, թե Ենոքը խոսում է իր կնոջ հետ ունեցած ինտիմ կապի մասին: Այդ ընթացքում Ենոքը դուրս է եկել մեքենայից: Ըստ դատահոգեբանական փորձաքննության եզրակացության՝ Աշոտ Բ.-ն, գտնվելով կումուլյատիվ աֆեկտի վիճակում, դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել Ենոքին, ապա հեռացել:

Հաջորդ առավոտ Աշոտ Բ.-ն ներկայացել է ոստիկանություն: Ենոքը դեպքի վայրից տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ օրեր անց մահացել է:

Աշոտ Բ.-ին մեղադրանք է առաջադրվել հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարած սպանության համար:

Ընդհանուր իրավասության դատարանում Աշոտ Բ.-ն իրեն մեղավոր է ճանաչել մեղսագրված արարքի համար, հայտնել է, թե կնոջը չի ներել: Դեպքի պահին աչքերի առաջ սեւացել է, չի հիշում՝ քանի անգամ է խփել Ենոքին:

Դատարանն Աշոտ Բ.-ին մեղավոր է ճանաչել քրեական օրենսգրքի 105 հոդվածի 1-ին մասով եւ դատապարտել 4 տարի ազատազրկման:

Գոհար ՔԱԼԱՇՅԱՆ

Բացահայտվել են ապօրինի ծառահատումներ

Ոստիկանության Թումանյանի բաժնի ծառայողները բնապահպանական ոլորտում կատարվող հանցագործությունների հակազդման նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ են իրականացրել: Ոստիկաններն Ալավերդի քաղաքին հարակից անտառում հայտնաբերել են հատված ծառերով բեռնված մեքենաներ եւ, ապօրինի ծառահատման կասկածանքով, ստուգումներ են կատարել:

Ոստիկանները պարզել են, որ «ԳԱԶ-66» մակնիշի ավտոմեքենան բարձված է եղել 3 խմ փայտանյութով: Վարորդը համապատասխան փաստաթղթեր չի ներկայացրել: Նա հայտնել է, որ լորենիները ապօրինի է հատել: «ԶԻԼ» մակնիշի ավտոմեքենան էլ բարձված է եղել 5 խմ փայտանյութով: Պարզվել է, որ հաճարենին ապօրինի հատել էր նրա հայրը:

Հայտնաբերված «Իվեկո» մակնիշի մեքենան բեռնված է եղել դարձյալ 5 խմ փայտանյութով: Վարորդը փայտանյութի օրինականությունը հավաստող փաստաթուղթ չի ունեցել:

Մեքենաները, ապօրինի փայտանյութով հանդերձ, տեղափոխվել են ոստիկանության Թումանյանի բաժնի պահպանվող հատուկ տարածք:

Դեպքերի առթիվ նյութեր են նախապատրաստվում:

Ապօրինի ծառահատումների դեմ պայքարը շարունակական է:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«Բենզինային» հափշտակություն

Երեւանի Վաղարշյան եւ Քոչարի փողոցների խաչմերուկից իր «ԲՄՎ»-ով ոստիկանության Նոր Նորքի բաժին բերվեց մի տղամարդ: Դրանից երեք ժամ առաջ նա մեքենան կայանել էր բենզալցակայաններից մեկի մոտ եւ աշխատակցին խնդրել լիցքավորել 20 հազար դրամի բենզին:

Հասկանալի է, որ նման քանակությամբ բենզին լիցքավորողը հեռու ճանապարհ պիտի անցներ: Մինչդեռ «ԲՄՎ»-ի վարորդը ոչ մի ճանապարհորդություն չէր ծրագրել: Նա ընդամենը հանցավոր սցենար էր ծրագրել, ինչը հաջողությամբ իրագործեց, երբ մեքենան լիցքավորելուց հետո առանց վճարելու հեռացավ: Տարօրինակ է, որ տվյալ բենզալցակայանի աշխատակիցը փողը նախապես չի վերցրել: Սակայն Հայաստանում, ի տարբերություն, օրինակ, Ռուսաստանի, փողը մեքենայի լիցքավորումից հետո է տրվում: Հետեւաբար այս հանցատեսակից հեշտ է խուսափել՝ մտցնելով նշված կարգը՝ նախ վճարիր պահանջված չափի բենզինի դիմաց, հետո կստանաս:

Քսան հազար դրամի բենզին հափշտակողը, սակայն, երեք ժամ անց հանգրվանեց ոստիկանության բաժնում, իսկ հետո այնտեղ եկավ բենզալցակայանի աշխատակիցը, եւ կողոպուտը կատարողին այլ բան չէր մնում, քան խոստովանել կատարածը:

Ռիտա ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Վստահության գինը

Ապրիլի 6-ին Մոսկվա-Երեւան ինքնաթիռի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանավակայանից ոստիկանության գծային բաժին բերման ենթարկվեց 2016 թվականի մարտից հետախուզման մեջ գտնվող Արմեն Ասատրյանը: Նախաքննական մարմնի կողմից նրան առաջադրված մեղադրանքը քրեական օրենսգրքի երկու հոդվածների մեղադրանքով էր՝ յուրացում եւ կեղծիք: Կասեցված քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Վստահության գինը տասնհինգ միլիոն դրամ արժեցավ. սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիր Սարգիս Ալեքսանյանն այդքան գումար տուժեց, երբ ընկերության տնօրենի գործը վստահեց Արմեն Ասատրյանին:

Արմենը կնոջ քրոջ որդին է. բարձրագույն կրթությամբ, բիզնեսից հասկացող, ճարպիկ բարեկամը ոչ միայն ամենահարմար թեկնածուն էր, այլեւ Սարգիսն անվերապահորեն հավատում ու վստահում էր նրան:

Արմենն իսկապես գտնված տնօրեն էր: Բազալտի խճի եւ ավազի արտադրությամբ ու վաճառքով զբաղվող ընկերության գործերը նրա օրոք ծաղկում էին: Տարբեր ընկերությունների տնօրենների հետ գործնական հարաբերություններն արագ փոխվում էին ընկերականի, եւ շինանյութի վաճառքի պայմանագրերը կլորիկ գումարներ էին բերում ընկերությանը: Հետո պիտի պարզվեր՝ նաեւ Արմենին...

Ո՞ր պահից սկսվեց Արմեն Ասատրյանի գայթակղությունը, իրեն լավ աշխատանքով ապահոված բարեկամին խաբելու միտքը ե՞րբ սողոսկեց գլուխն ու բիզնեսի գործերում դարձավ հիմնական նպատակ: Փողը, փաստորեն, ոչ միայն գայթակղելու, նաեւ իրատեսությունից զրկելու հատկություն ունի: Այլապես ինչպե՞ս հասկանալ խաբեությամբ խոշոր գումարներ յուրացնողին, երբ մեկին գումարած մեկի պես պարզ է, որ մի օր ամեն ինչ ջրի երես կելնի, որ խաբված մի օր կիմանա իրողությունն ու կդիմի օրենքի օգնությանը: Գուցե հույսն իրենց ճարտարախոսությա՞ն, հանցանքի ճանապարհը կեղծիքներով նախապես «հարթած» լինելո՞ւ վրա է: Համենայնդեպս, Արմեն Ասատրյանը ոստիկանությունում, իսկ հետո արդեն նախաքննության ընթացքում այդ կռվաններն էր «բանեցնում»:

Կռվանները, սակայն, քննություն չբռնեցին: Օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումներով հիմնավոր ապացուցվեց, ապա եւ՝ դատահաշվապահական փորձաքննությամբ հաստատվեց նրա մեղքը՝ առանձնապես խոշոր չափերով յուրացում: Քրեական գործն ուղարկվեց դատարան:

Դատաքննությամբ պարզվեցին նաեւ Արմեն Ասատրյանի մյուս «գործերը», որոնք արդեն որակվեցին քրեական օրենսգրքի 325 հոդվածի հատկանիշներով՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը:

Իսկ հիմա ներկայացնենք բարեկամի վստահությունը չարաշահած երիտասարդի գործի որոշ մանրամասներ:

Ասացինք՝ մորաքրոջ ամուսնու հիմնադրած սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն զբաղվում էր բազալտի խճի եւ ավազի արտադրությամբ ու վաճառքով: Բիզնեսի հաջողության մեջ Արմենն իսկապես մեծ դերակատարում ուներ. նրա գործնական հմտությունների շնորհիվ էր, որ երկու տասնյակի հասնող կազմակերպություններ պայմանագիր էին կնքել այս ընկերության հետ: Նրա ջանքերն ու ներդրումը բարձր էին գնահատվում, ինչի վկայությունն է այն փաստը, որ միառժամանակ կատարում էր նաեւ ընկերության թե՛ հաշվապահի, թե՛ գանձապահի գործառույթները: Անսահմանափակ հնարավորություն, որ գայթակղեց ու դարձրեց ապերախտ, խաբեբա, խարդախ...

Չմանրամասնելով յուրացման ողջ գործընթացը՝ նշենք միայն, որ տարբեր կազմակերպությունների կողմից ընկերության հաշվարկային հաշվին մուտքագրված հիսուն միլիոն դրամից երեսունհինգ միլիոնն էր ծախսվել ընկերության գործունեության նպատակներով: Մնացած տասնհինգ միլիոն դրամը «մուտքագրվել էր» Արմեն Ասատրյանի գրպանը...

Խաբեությունն «ապահովագրել էր» կեղծիքով: Մասնավորապես, պատրաստել էր դրամարկղային մուտքի օրդերների կեղծ անդորրագրեր, որոնք հետո, որպես «անմեղության» ապացույց, ներկայացրել էր դատարան: «Պաշտպանական» սույն մեխանիզմը, սակայն, չաշխատեց, փոխարենը ավելացրեց հեղինակի քրեական պատասխանատվության բեռը:

Արմեն Ասատրյանն, ինչ խոսք, կրելու է համապատասխան պատիժ: Իսկ տուժող կողմին մնում է հիշել ժողովրդական խոսքը՝ «Վստահիր, բայց ստուգիր»:

Սայադ ՈՍԿԱՆՅԱՆ



Կյանքից հեռացավ ոստիկանության պաշտոնաթող մայոր Սայադ Ոսկանյանը:

Մնվել է 1931 թ. փետրվարի 2-ին, Տավուշի մարզի Արծվաբերդ գյուղում:

Բանակում ծառայությունից հետո աշխատում է հայրենի գյուղի կոլտնտեսությունում:

1959 թ. ընդունվում է ԽՍՀՄ ՆԳՆ Թբիլիսիի միլիցիայի հատուկ մասնագիտական դպրոց, որն ավարտելուց հետո՝ 1961 թ, որպես տեղամասային տեսուչ ծառայության է անցնում Շամշադինի (Բերդ) շրջանի ներքին գործերի բաժնում: Հետագայում նշանակվում է ՆԳ բաժնին կից պահպանության բաժանմունքի պետ եւ ծառայում մինչեւ 1986 թվականը՝ մինչեւ կենսաթոշակի անցնելը:

Բարեխիղճ, օրինահարգ քաղաքացի, պատրաստակամ, վստահելի ընկեր՝ այսպիսին են հիշում Սայադ Ոսկանյանին նրան ճանաչողները: Այդպիսին էլ կմնա նրանց հիշողության մեջ:

Հանրապետության ոստիկանության վետերանների խորհուրդ

Գողն ու գողոնը հայտնաբերվեցին

Ապրիլի 1-ի գիշերը գողություն կատարվեց մայրաքաղաքի Կապանի փողոցի բջջային հեռախոսների աքսեսուարների խանութից: Դուռը բացել էին տեխնիկական միջոցների գործադրմամբ ու հափշտակել բջջային հեռախոսների մասեր:

Ապրիլի լույս 9-ի գիշերը, դարձյալ տեխնիկական միջոցների գործադրմամբ, բացել էին Երեւանի Սունդուկյան փողոցի բանջարեղենի խանութի պատուհանը: Բայց խանութի անվտանգության ծայնազդանշային համակարգը միանալուն պես փախել էին:

Ապրիլի լույս 28-ի գիշերը մայրաքաղաքում եւս մի գողության դեպք արձանագրվեց: Այս անգամ թիրախը Երեւանի Վահրամ Փափազյան փողոցի հացաբուլկեղենի կրպակն էր:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի ծառայողները օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզեցին, որ գողություններն ու գողության փորձը արել է նույն անձը: Կասկածվողը՝ 22-ամյա Անուշավան Մուրադյանը, վերցվեց օպերատիվ տեսադաշտ: Ոստիկանները սկսեցին հետեւել նրա շարժին՝ կազմակերպելով դարանակալումներ: Օրեր տեւած հետեւողական աշխատանքն արդյունք տվեց:

Ապրիլի 29-ին, հերթական գողությունը կատարելուց քիչ անց, ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախույզները բռնեցին Անուշավան Մուրադյանին ու բերման ենթարկեցին ոստիկանության Արաբկիրի բաժին: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին գողացված իրերը:

Հարուցվել է քրեական գործ:

«Բնատերը»

«Թմրահաճույքը» միշտ եղել էր. թմրանյութի պահուստ միշտ ուներ, ու հենց սիրտն ուզեր՝ գործածում ու հոգին «փառավորում էր»...

Պարզապես ապրիլի 22-ին բախտը չբերեց. անհաջող օր էր: Ի՞նչ իմանար, որ դաշտամիջում «գործ անողները» ոչ թե հողագործներ են, այլ ոստիկան ու հեռվից ուշիուշով հետեւում են իր նախապատրաստական աշխատանքին: Իսկ դա բավական բարդ ու նուրբ աշխատանք էր՝ համարյա քիմիկոսի աշխատանք՝ որ նյութից՝ ինչքան, ապա կարեւոր հավելում բենզինը ինչ հարաբերակցությամբ խառնել, որ թմրանյութը «կատարյալ» լինի՝ հաճույքաշա՜տ, կոկորդիլոսի պես խժռո՜ղ...

Արմավիրի մարզի բնակիչ Մովսես Հակոբյանը քաջատեղյակ է բենզինով եւ քիմիական այլ միացություններով պատրաստվող թմրանյութի «արտադրության» եղանակին: Գիտի նաեւ, որ դա մահաբեր թմրամիջոց է՝ մեկ-երկու տարում մարմինը քայքայվում է, թարախակալում, փտախտ է սկսվում: Գիտի, բայց այնպիսի կախվածության մեջ է, որ ահն ու մահը աչքին չեն երեւում:

Ցավոք, մահաբեր, բայց էժանագին սույն թմրամիջոցը պատրաստելու մոլուցքն այսօր շատերին է պատել, ու թեեւ պարբերական են, մասնավորապես, ոստիկանության՝ այդ մահաբեր ախտից հրաժարվելու հորդորները, ինքնասպան թմրամոլների շարքերը չեն նոսրանում: Հարցրու նրանցից յուրաքանչյուրին՝ ցույց կտա վերքերով պատված մարմինն ու կհաստատի, որ բենզինախառն թմրանյութը՝ իրենց լեզվով ասած՝ «կոկորդիլոսը»՝ մահ է: Իսկ միակ «արդարացումը» կախվածությունն է...

Դառնանք «մեր» թմրամոլին՝ 31-ամյա Մովսես Հակոբյանին:

Քրեական հետախույզները օպերատիվ տվյալներ ունեին Մովսես Հակոբյանի «գործունեության», նաեւ այն մասին, որ գարնան գալուն պես նա իր «թմրալաբորատորիան» տեղափոխել է բնության գիրկ. դաշտում գործ անելուն զուգահեռ օգտակարը «հաճելիի» հետ էր համատեղում: Իր խոստովանական ցուցմունքում Մովսեսը մի պարզաբանում էլ մտցրեց՝ նաեւ տնեցիների աչքից հեռու լինելու համար էր դաշտը նախընտրել:

Մովսես Հակոբյանին «արտադրանքով» հանդերձ բռնելու համար ոստիկանները, իբրեւ հողագործներ, հայտնվեցին հարակից հողատարածքում: Մովսեսն անխռով իր գործին էր: Թմրամիջոցը պատրաստ էր, երբ հյուր ընդունեց: Համագյուղացի Սեւակ Գեւորգյանն էր: Հետո պիտի պարզվեր, որ նա հաճախ էր ընկերակցում Մովսեսին, բայց բնության գրկում առաջին անգամ էր: Լինելով Մովսեսից ոչ պակաս «ռոմանտիկ»՝ անմիջապես արձագանքել էր նրա հրավերին:

Բայց անհաջող օր էր. պատրաստվում էին ներարկվել, երբ անսպասելի շրջապատեցին հարեւան «հողագործներն», ու վայելքը հօդս ցնդեց...

Փաստով քննություն է կատարվում:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Կարճանակներ գործադրածները հայտնաբերվեցին

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությունում օպերատիվ տվյալներ էին ստացվել, որ Էջմիածին-Երեւան ճանապարհին հարսանեկան ավտոշարասյան մասնակից երկու մեքենայի սրահից կրակոցներ են արձակվել:

Քրեական հետախուզության գլխավոր վարչության եւ Վաղարշապատի բաժնի ծառայողները, համատեղ միջոցառումներ ձեռնարկելով, կարճ ժամանակում պարզեցին այդ մեքենաների մակնիշները, վարորդների եւ ուղեւորների ինքնությունը: Նրանք հայտնաբերվեցին ու, մեքենաներով հանդերձ, բերման ենթարկվեցին ոստիկանության Վաղարշապատի բաժին:

«Կիա»-ի վարորդի խուզարկությամբ հայտնաբերվեց օդամղիչ ատրճանակի թույլտվության վկայական: Մեքենայի սրահում հայտնաբերվեց օդամղիչ ատրճանակ, ինչպես եւ մարիխուանայի նմանվող զանգված: «BMW»-ի սրահում էլ հայտնաբերվեց թույլտվության վկայականով եւ գործարանային համարով գազային ատրճանակ ու նույն ատրճանակի փամփուշտ:

Դեպքի հանգամանքները պարզվում են:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:



Փախչող կենդանի բռնելու թակ
Երգեցիկ թռչուն
Տպագիր արտադրանք
Հայկ. տոմարի ամիս
«Ժիզել»
Դարպաս
Հույն քանդակագործ
Շախմատի աշխարհի չեմպիոն
Կատարող երաժիշտ
«... Մարիա»
Հնում պարսիկ զորավար
Գլխարկ
Հայկական կինոնկար
Մոցարտ
Շինանյութ
Հեթանոս. մեհյան
... Գարդներ
Յագուար, ընձառյուծ
Իսպան. նկարիչ
Ջարդատարներ գրող
Նախադուռ
Ռուս բեռեռախույզ
... Շեւչենկո
Անգլիացի ֆիզիկոս
Բանջարանոցի պտուղ
Իտալիայի դրամ
Հայ ավանդ. թագավոր
Խաղողի տեսակ (Ֆրանս.)
Նոյի միջնեկ որդին
Նոտա
Առարկայի կտոր
Օլեգ ...
Երկիր, Հարավ. Ամերիկա
Աբովյան, հերոս
Վարդազգի ծառ
Ֆոսֆորների դասի հանքանյութ
... Լատինինա
Մաքուր
Դեպքին ներկա
Ժանիք
Տիբեթի ցուլ
Սրինգ
Գործողություն
Պետական պաշտոնյա
Բերդաքաղաք, Արտազգավառ
Լեռ, Հայաստան
Լուսամուտ
Քիմիական տարր
Ջրաշուշան
Ռուս գրող
Հսկիչ
Լսարան
Վլադիմիր ...
Ազգային արգելոց, Քենիա
Ասք, ավանդազրույց
Վոլգայի վտակ
Թանկարժեք քար
Թեհրան
Ֆենիմոր ...
Գերմ. փիլիսոփա
Կոնֆետ
Քաղաք, Լիպեցկի մարզ
Ջրվեժ, Որոտանի կիրճ
«... տղաներ»
Նոր Կտակարան
Սողոմոն Սողոմոնյան
Փոքր մոլորակ
Ղողզական էպոս
Գորկի, պիես
Հեկտար
Լեհ բանաստեղծ
Ծխախոտ
Քաղաք, Իսպանիա
Լավաշ
Ժ. Բեկո, երգ
Խորհրդ. ակնաբույժ
Հրացանի մաս
Կալվածատեր, Հին Հայաստ.
Զուգապար
... Ուլանովա
...ի նշան
Փոցխ
Նյամունասը Բելառուսում
Վարչատարածք. միավոր, Հունաստ.
Հաց թխելու վառարան
Սահման
Կաթոլիկ եկեղեցու կենտրոնը
Պապ
Խիզախ
Փորված տեղ
Թունավոր դոդոշ
Հայկ. աստվածություն
Աղանդերային գինի
Գրող Իվլին ...
... Օբամա
Նոր
«Իմ ...ի ...ը իմ ...ը չէ»
Ներքին բարոյական ուժ
... Տրավոլտա
Տրանսպորտային աղետ

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ապագուշակ

Խոյ - Եթե ժամանակ չկորցնեք, կարող եք լուծել կարեւոր հարցեր:

Ցուլ - Հաջողության կհասնեք մասնագիտական հարցերում՝ լուծելով մի շարք խնդիրներ:

Երկվորյակ - Իրադարձություններով շաբաթ է սպասում: Չի բացառվում, որ զբաղվեք ոչ հաճելի գործերով:

Խեցգետին - Խորհուրդ չի տրվում նոր գործ սկսել. դժվար թե համախոհները, մտերիմները կարողանան օգնել:

Առյուծ - Հանդիպումների, գործնական համաձայնությունների համար շաբաթը բարենպաստ է: Ղեկավարությանը կզարմացնեք ձեր գաղափարներով:

Կույս - Մասնագիտական տեսանկյունից այնքան էլ բարենպաստ շաբաթ չէ, հնարավոր են տհաճ խոսակցություններ:

Կշեռք - Նպատակասլացությունն ու վճռականությունը կօգնեն հասնել լուրջ հաջողությունների. դժվարությունները չեն հուսահատեցնի:

Կարիճ - Հաճախ այնպես չեք վարվում, ինչ սպասում են ձեզնից. դա նույնիսկ կարող է մոլորության մեջ գցել հակառակորդներին:

Աղեղնավոր - Ցանկալի է պահպանեք հանգստություն: Խուսափելք չնախատեսված ծախսերից:

Այծեղջյուր - Կկարողանաք ցույց տալ ձեր իրական հնարավորությունները: Չեն բացառվում հաջողություններ գործնական ասպարեզում:

Ջրհոս - Խորհուրդ չի տրվում կարեւոր հանդիպումներ ունենալ: Կարող եք լուծել անձնական որոշ խնդիրներ:

Ձուկ - Կհասնեք հաջողությունների: Հնարավոր է գործնական հարաբերությունները վերածվեն անձնականի:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1. f6-g7 f8:d2 2. e1:e5x

Խնդիր N2 1. h4-g3 d8:b6 2. g3-d6 c5:e7 3. f6:a1x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 09.05.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: